

տել : — Մտիկ ըրէ, Մարթա, աւել-
ցուց քիչ մը ետքը . — վաղը Տերվիոյ
պիտի տանիմ մեր քաղքին համար-
առուն . անոր վարձքովը պատարագ մը
լսել կու տանք իրեն համար, և ի ու-
կանոյ ըսել կու տանք ուր որ բանա-
դրանք չկայ : —

— Եւ արդէն պատարագ ըսել տուի
իրեն համար, պատասխանեց կինը . և
աչքը աղեկատին դարձնելով — կը
տեսնե՞ս այս ասորը, ըսաւ, ի ուկանոյի
երիցուն է . մանուածքը պատարագին
համար տալիք ողորմութեան տեղ կը
բռնէ : —

Եւ ավարը շրթունքները սղմեց, որ
յանկարծական սրտին զգացմունքէն կը
խայթէին ու կը դողդղղային . և հազիւ
հազ լալը բռնելով այնպիսի գութ մը,
խանդաղատանք մը և սրտի խշխշուք մը
զգաց իրեն պառաւ զուգակցին վրայ,
յորում աւելի սուրբ, և կ'ուզեմ ըսել՝
աւելի քաղցր սէր մը կար, քան զայն
որ երիտասարդութեան միջոց զգա-
ցեր էր :

ԹՈՎՄ. ԿՐՈՍՍԻ :

Փող :

Հատ հեղինակներ փողին գիւտը
Ետրուրացւոց կը սեպեն : Եւրիպիդէս
և Սոփոկլէս, և աս երկու ողբերգակ
բանաստեղծներուն վրայ ծանօթութի
գրողները կ'ըսեն որ Եւրիպիդէս անու-
նով ետրուրացի մը եղաւ որ Հերակլի-
տեանց հետ այս գործիքս (Յունաց բա-
նակին մէջ մտցուց : Եթէ այս վերջին
բաժնիս իրաւ ըլլայ՝ Ետրուրացւոց
(Յունաց հետ վաճառականութե հա-
ղորդակցութիւնը շատ աւելի առաջ
սկսած պէտք է սեպենք :

Յոյք Տրոյիոյ պատերազմին ժամա-
նակ դեռ չէին սկսած թմբուկ գործա-
ծել . բայց Հոմերոսի ատեն ծանօթ
էր, ինչպէս որ իրեն գորտոց և մկանց
պատերազմին վիպասանութենէն յայտ-
նի կ'երևնայ : Իսկ Սիդիքիոս պարտք

չսեպեց պատմական ոչինչ ճշգրութեանց
ուշադրութիւններու . այսպէս Եւրիպի-
դէս մէջ հաստատապէս ապահովցնելով
որ Սիդէն՝ Եւրոպայ զաւակը Տրոյիոյ
պաշարման մէջն էր, կը գովէ իր հան-
ձարը տեսակ մը փող հնարելուն հա-
մար : Եւսպիսի ժամանակագրական
վրիպակները թոյլ տուեալ են բանաւ
տեղծից . բայց 'ի պատմութենէ մեզի
յայտնի է որ փողը (Յունաց մէջ այնչափ
կանուխ մտած չէ . ստոյգ է որ շուտով
մտաւ (Յունաստանի հանդիսաւոր խա-
ղերուն մէջ և շատ յարգ ստացաւ :

Եոյնպէս 'ի պատմութենէ գիտենք
որ Սքարտիագէսի Սեսենացւոց դէմ
ըրած պատերազմին մէջ յանկարծա-
կան փողի աղաղակը անանկ մեծ սար-
սափ ձգեց (Սեսենացւոց բանակին մէջ՝
որ շատ չտեւեց Եւրիպիդէսի մտած
յաղթութեան, որովհետեւ մինչև այն
ատեն անծանօթ էր փողը այն կողմի
ազգերուն :

(Յունաց հեղինակները իրենց ազգայ-
ին փողերուն վրայ մասնաւոր տեղե-
կութիւն մը չեն տար . բայց Հոմերոսի
ցւոց այլ և այլ տեսակ փողերուն
վրայ քանի մը գիտելիք կան : Եւսպիսի
ընք իրեք տեսակ փող ունէին : Եւս-
պիսի տեսակը խողովակի նման ըլլալուն
համար քող կ'անուանէին . ասիկայ ու-
ղիղ էր և բերնի կողմերը նեղ, և ան-
զգալի կերպով կը լայննար ու կը ձեռով
կը վերջանար : Եւրիպիդէս տեսակը առջի-
նէն պզտիկ էր և ծայրը գալարուած, ուս-
տի և գալարաքող կ'ըսուէր : Եւրիպիդէս տե-
սակին յետոյ կ'ըսէին՝ որ գրեթէ բո-
լորովին շրջանակաձև էր :

Սիդիք քողը զինուորները 'ի պատե-
րազմ սրտասնդելու կը գործածուէր,
կամ իւրաքանչիւրը իրեն դրօշակին տակ
ամփոփելու, երբոր սաստիկ խառնուե-
լով ցրուած կ'ըլլային : Սիդիք փողը
բանակի մէջ մասնաւոր հետեւակազօ-
րու համար որոշեալ էր, և հնչողներն
ալ հետեւակ էին . բայց եթէ կարգէ
զուրս դիպուած մը եթէ ստիպէր՝ ձիու
վրայ ալ կրնային հեծնել : Եւրիպիդէս
առ բանակ կը ճակատէին՝ զարնուիլ

սխալու և պատերազմի նշան փողեր
հնչեցնելն էր :

Ինչպէս որ տեսակ մը հնչեցնելը
թշնամուռն վրայ յարձրկելու նշան էր,
այսպէս ալ ուրիշ եղանակ մը ետ քա-
շուիլ կը նշանակէր : Ուղիղ փողով
գլխաւորապէս զօրաց իրենց այլ և այլ
պարտքերը նշան կու տային : Դարձեալ
այս փողս կը գործածուէր զիկտատո-
րաց, հիւպատներուն, պրետորաց և զօ-
րավարաց յաղթանակներուն . նաև այս
փողահարները թափօրին առջևէն կ'եր-
թային, և հանդիսին յատուկ իրենց
հնչեցուցած բարձրաձայն երգերովն ու-
ղը կը թնդացնէին և ժողովրդեան ու-
րախութիւնը կ'առաւելուին : Հունաց
նմանութեամբ հռովմայեցիք ալ իրենց
նուիրական խաղերէն ոմանց մէջ այս
ուղիղ փողը կը գործածէին, ինչպէս օ-
րինակի համար ըսենք՝ Փլորեայ դիցու-
հւոյն տօնախմբութեանը և ուրիշ զո-
հական հանդէսներու մէջ :

Դաւարափողը հեծելազօրու սահմա-
նուած էր, ինչպէս որ Որատիոսի տա-
ղերուն առաջին գրքէն յայտնի կ'իմա-
ցուի : Ըստ Լամբիանոսի Ուարկելիանո-
սի՝ երբ հռովմայեցի կայսերք բանակին
մէջ կ'ուղէին զօրաց յորդոր կամ ատե-
նաբանութիւն մը խօսիլ, 'ի ձայն գա-
լարափողոյ կը հաւաքէին զիրենք, և
դարձեալ՝ ինչպէս որ հետեւակազօրուն
առաջ նետուելուն կամ ետ քաշուելուն
նշան ուղիղ փողն էր, ձիաւորներուն
համար ալ գալարափողը կը գործա-
ծուէր : Եւ յաղթական հանդէսներու
մէջ ալ գալարափողը կը հնչեցուէր,
երբ աւելի փառաւոր ընելու համար
ձիաւոր զօրքն ալ մասնակից կ'ընէին :

Իսկ երրորդ տեսակն՝ այսինքն շեփոն
ալ նոյնպէս ուղիղ փողոյն պէս հետեւա-
կազօրուն կը վերաբերէր : Դարձեալ
շեփորով գիշերուան այլ և այլ պահերը
կ'իմացնէին, և պահապանները իրարու
տեղ կը յաջորդէին . և առջի երկու փո-
ղերէն աւելի շեփորան ընտրած էին աս
պաշտօնիս՝ որովհետեւ առջիններէն շատ
աւելի սուր էր ասոր ձայնը, և շատ ա-
ւելի հեռու տեղուանքէ որոշ կը լսուէր :

Երեսներն Ուլենտիանոսի կայսրու-
թեանը ժամանակ հռովմայեցիք ուրիշ
չորրորդ փող մըն ալ սկսան գործածել,
տեսակ մը վայրի գովմէշի եղջիւրներէ, որ
նոյն ատեն Վերմանիոյ մէջ լեցուն էին .
այս եղջերափողին բերանն ոսկւով օ-
ծած էր, և ամէն փողերէն աւելի ու-
ժով և որոշ էր ձայնը :

Երկրորդ գեռ շատ ուրիշ տեսակ տե-
սակ փողեր ունէին . ասոնցմէ էր Լթե-
նացւոց փողը, զորն որ Լթենաս գտեր
էր և Լքիացիք կը գործածէին : Լք-
գիպտացւոց Սիրիս չաստուածոյն գտա-
ծը, զոր Լքգիպտացիք զօհերու ժամա-
նակ կը գործածէին : Եւրոպաց փողը՝ ու-
րուն բերանը կենդանւոյ մը գլուխ կը
ձեւացնէր, խողովակը կապարէ էր և
սուր ձայն մը ունէր : Բաբլոնացւոց
փողը՝ որուն վերջը եզան գլխու ձեւ ու-
նէր, և վսեմ ձայն մը կը հանէր : Բա-
բլոնացիք՝ որուն խողովակը եղեգէ էր, և
առաջնոյն նման վսեմ ձայն մը ունէր :

Հռովմայեցիք իրենց սուսերամար-
տիկ ըմբիշները փողերով կը խրախու-
սէին 'ի կռիւ . Հոյն ըմբիշներն ալ 'ի
ձայն սրնգին Լքգոսի կը կռուէին : Ու
մաքանդակներու հաւաքման մը մէջ
ազնիւ տեսակ մարմարիոնի մը վրայ ամ-
փիթատորոն մը ձեւացուած է հանդի-
սականներով հանդերձ . կրկեսին մէջ
երկու ըմբիշ կը պատերազմին 'ի ձայն
երկուց փողոյ . գալարափողար մըն ալ
կայ հօն, որն որ կռուին նշան տուողն
էր . իսկ փողերուն ձեւը Բաղդիացւոց
ձիաւոր զօրաց փողերուն կը նմանի :

Ուր ազգին մէջ ալ՝ ինչպէս որ կ'ե-
րեւայ անշուշտ հետեւութեամբ ուրիշ
ազգաց աս այլ և այլ տեսակ փողերէն
շատը կային . բայց պատերազմներու
մէջ հնչեցնելու սովորութիւնը չէնք գի-
տեր թէ երբ սկսաւ : Խորենացին Բ.
գրքին մէջ նախ կը յիշէ՝ այսպէս . “Եւ
Սմաւոտ հրամայէր զփողսն պղնձիս հըն-
չեցուցանել, և յառաջեալ զձակատ
իւր . . . ” . չենք գիտեր եթէ անկէ ա-
ռաջ ալ սովորութիւն կար արդեօք .
բայց կ'երեւայ թէ մէյմը սկսելէն վերջը
անընդհատ ամէն պատերազմի մէջ կը

գործածէին. վասն զի ուրիշ շատ պատ-
մագրաց մէջ ալ յիշատակուած է.
ինչպէս նաև Օ. Ենոք Վլակ իրեն Բ.
պատճէնին մէջ, երես 43, Տրդատայ
համար այսպէս կը պատմէ. «Լաւապա
գարձեալ թագաւորն 'ի փոքր կոտորա-
ծէն, եւ 'ի գլուխ արձանին, և հարեալ
զազդարար փողն, մինչև ամենայն զօրքն
ժողովեցան 'ի մի վայր, : Եղիշէի մէջ
մասնաւոր փողահարներ ալ կը յիշուին.
ինչպէս՝ Սիհրներսէհ հայոց բանակին
ամէն պատրաստութիւնը ուղելով իմա-
նալ՝ մանրամասն կը հարցընէ Սասակայ
ու ինչուան կ'ուզէ տեղեկանալ. «Եթէ
քանի փողահարք 'ի մէջ գնդին ձայնի-
ցեն, (երես 167) :

Իսկ պատերազմէ դուրս խաղաղու-
թեան ժամանակ հնչեցնելը նշան էր
սպարապետին մեծութեանը. այսպէս
ահա Սասան Սամիկոնեան սպարա-
պետը՝ ինչոր պարսկին երթալու միջոց
հնչեցնել տուաւ, զորն որ այսպէս կը
պատմէ Վազար Փարպեցին. «Տայր
հրաման Սամիկոնեանն Սասան հնչե-
ցուցանել զփողս պատերազմականս, և
'ի սաստկութենէ փողոցն ձայնից հըն-
չեալ երկիրն թնդէր. յորմանէ զարհու-
րեալք արք զօրուն 'Երիտորոյ, կարծէին
խաբէութեամբ 'ի փնասել զնոսա եկն
Սամիկոնեանն Սասան, և ոչ սիրով
'ի նուաճումն խաղաղութեան : Եւ 'Եր

խոր առաքեալ ընդ առաջ նորա արս
աւագս, տայր ասել ցՍամիկոնեանն
Սասան, եթէ ոչ ըստ կարգի Լաւապ
առնես դու զայդ, այլ նորոգ իրօք այլ
իմն ձեռնաս. յորում յայսմ հետէ քեզ
կարի զԼաւապ զկարգն պարտ է ու-
նել և հաւանել, քանզի 'ի չուի փողով
յԼաւապ բանակ սպարապետն միայն
Լաւապ իշխէ մտանել. և այլ ոք զայդ
համար ձեռնութիւն 'ի պարսիկս ոչ ոք
իշխէ առնել. և այլն և այլն. (երես
286) :

Կոստանդիանոս թագաւորն ալ պա-
տուելով մեր Տրդատ թագաւորը այլ
և այլ տեսակ նուագարան գործիքներ
իրեն տուաւ, որ է ըսել՝ հրաման տուաւ
այն զինուորական նուագարանները
զարնելու՝ որն որ կայսերը միայն կըր-
նային հնչեցնել. ըսածնիս Վաշանց
թղթին այս խօսքերէն յայտնի է.
« () Ժտեցաք զսա (զՏրդատ) . . . ու-
րողնդոստ ահագնագոչ շեփորայիւք,
երգեհոնօք և զանոնօք յորդաձայնիւք, :
Ուր որ նաև հազարապետաց համար
ալ կ'ըսէ թէ՝ «Իսկ հզօր հազարապե-
տացս հայոց պարգևեցաւ 'ի մերմէ
թագաւորութենէս . . . փողս և փան-
տիոս բարձրաբարբառս, : » :

Եղիշէ նաև Ռեծ Գալարաթիոյ ալ կը յի-
շէ, բայց կ'երևայ թէ Պարսից մէկ
կողմին համար է :

ՊԱՏԿԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Հիմնադրող դար.

Դ. Պատկեր. . ամ տևառն 400-499

Նկոյս.

Յովհ. Ռսկեպերան.

Ճառք ԺԸ Թուով* :

Ա. Մեկնութիւն Մատթէի* : — Բ. Մեկնութիւն Յովհաննու
աւետարանչի*, (Թարգմանութիւն ԺԲ դարու) : Գ.
Մեկնութիւն Եսայեայ, (Թերի) : — Դ. Թղթոց մեկ-
նութիւն* : (Ի մեկնութենէ ԺԴ Թղթոց Պօղոսի առաքե-
լոյն ոմանք և եթ հասեալք են 'ի ձեռս մեր. և 'ի նոցանէ
ևս ոմանք ամբողջ և այլք ոմանք Թերի) : — Ե. Հա-
տուածք 'ի մեկնութենէ Գործոց առաքելոց, 'ի մեկնու-
թենէն Կաթողիկեայց Թղթոյն Յովհաննու, 'ի մեկնու-